

ԿԱՐԾԻՔ

Պաշտոնական ընդդիմախոսի Քնարիկ Մկրտչի Շամիլյանի
«Բալենի սովորականի պտուղների ազդեցությունը սիրտ-անոթային
համակարգի հիվանդությունների զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների վրա»
թեմայով ատենախոսության վերաբերյալ, որը ներկայացված է Երևանի Մ.
Հերացու անվան պետական բժշկական համալսարանի գործող ԲՈԿ-ի 026
«Տեսական բժշկություն» մասնագիտական խորհրդ ԺԴ. 00.14 –
«Դեղաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման համար

Թեմայի արդիականությունը

Ժամանակակից դեղաբանության կարևոր խնդիրներից մեկը շարունակում է մնալ սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելման և բուժման համար նոր դեղերի ստեղծումը: Ներկայումս սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների կանխարգելման և բուժման համար կիրառվող դեղերը բարձր արդյունավետություն ունենալով հանդերձ, կարող են առաջացնել մի շարք անբարենպաստ ազդեցություններ: Դեռևս 2002 թվականից Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն արդեն սկսել է իրականացնել մի նախագիծ, որի նպատակն է տարբեր երկրների առողջապահական համակարգերում աջակցել արդյունավետ մեթոդների և այլընտրանքային բժշկության միջոցների կիրառմանը:

Վերոնշյալի կապակցությամբ, Քնարիկ Մկրտչի Շամիլյանի ատենախոսական աշխատանքը, որը նվիրված է սիրտ-անոթային համակարգի հիվանդությունների զարգացմանը նպաստող ռիսկի գործոնների վրա ազդող բուսական պատրաստուկների ազդեցությունների ուսումնասիրությանը, համարում եմ կարևոր և արդիական:

Աշխատանքի գիտագործնական նշանակությունը

Ատենախոսական աշխատանքի ընթացքում հեղինակի կողմից հայտնաբերվել է կամավորների մոտ բալենի սովորականի պտուղների հակաազդեգանտային և հակահիպերլիպիդեմիկ ազդեցությունները:

Փորձարարական հետազոտության տվյալները ցույց են տվել, որ հետազոտվող պատրաստուկները դրսևորում են ուղեղի կեղևի տեղային արյան շրջանառությունը խթանելու, զարկերակային ճնշումն իջեցնելու ունակություն, ինչպես նաև հակաբորբոքային ազդեցություններ:

Ատենախոսական աշխատանքի արդյունքում բացահայտված հետազոտվող նյութերի վերոնշյալ հատկությունները կարող են հիմք հանդիսանալ բալենի սովորականի պտուղներից ստացված լիոֆիլ փոշու հիման վրա նոր սրտանոթային և ուղեղանոթային ակտիվությամբ օժտված միջոցների ստեղծման համար:

Աշխատանքի ընդհանուր նկարագրությունը

Թեզն ունի ավանդական կառուցվածք: Աշխատանքը ներկայացված է համակարգչային տեքստի 129 էջերում, պարունակում է 3 աղյուսակ և 39 նկար, բաղկացած է ներածություն, գրականության ակնարկ (գլուխ I), հետազոտության նյութը և մեթոդները (գլուխ II), հետազոտության արդյունքները և դրանց քննարկումը (գլուխ III), ամփոփումը, եզրակացությունները, օգտագործված գրականության ցանկը, հապավումների ցանկը բաժիններից: Օգտագործված գրականության ցանկը ներառում է 242 աղբյուր:

Ներածության մեջ հեղինակը հիմնավորում է աշխատանքի արդիականությունը, ձևակերպում հետազոտության նպատակն ու հիմնական խնդիրները, սահմանում դրա գիտական նորությունը և գիտագործնական նշանակությունը:

Գրականության ակնարկի առաջին բաժինը նվիրված է սրտանոթային հիվանդությունների բուժման և կանխարգելման ժամանակակից ռազմավարությունը, հակաազդեգանտային բուժման մոտեցումներին:

Գրականության ակնարկի երկրորդ բաժնում ներկայացված են բուսական ծագման միացությունները որպես հակաազդեգանտային ազդեցություն ունեցող դեղերի աղբյուրները: Գրականության ակնարկի երրորդ բաժնում ներառված են բալի դեղաբանական հատկությունների վերաբերյալ ժամանակակից գրականության տվյալները:

Ատենախոսական աշխատանքի երկրորդ գլուխը նկարագրում է առաջադրանքների լուծման համար օգտագործվող նյութերն ու հետազոտական մեթոդները:

Ատենախոսության երրորդ գլուխը նվիրված է սեփական հետազոտության արդյունքներին և դրանց քննարկմանը: Մասնավորապես, ներկայացված է հեղինակի կողմից հայտնաբերված բալենի սովորականի պտուղների հակաազդեգանտային ակտիվությունը, ինչի մասին վկայում են դրանց ընկճող ազդեցությունը արախիդոնաթթվով մակածված թրոմբոցիտների ագրեգացիայի ցուցանիշների վրա:

Ատենախոսի կողմից ներկայացված են բալենի սովորականի պտուղների հատկությունը նվազեցնելու արյան խոլեստերինի, ցածր խտության լիպոպրոտեինների և եռգլիցերիդների մակարդակները:

Ատենախոսի կողմից մշակվել և իրականացվել է բալենու պտուղներից լիոֆիլ չորացված փոշու ստացումը: Համեմատական քանակական վերլուծության արդյունքները ցույց են տրվել, որ անտոցիանների պարունակությունը խորը սառեցմամբ ստացված փոշում գերազանցում է մեթանոլային և էթանոլային լուծամզվածքներում վերջիններիս քանակին թարմ պտղում:

Աշխատանքի երրորդ գլխում նկարագրված են նաև բալի լիոֆիլ փոշու ներորովայնային ներմուծման ուղեղանոթային, հակազերճնշումային և հակաբորբոքային ազդեցությունները: Մասնավորապես, ներկայացված են տվյալները, որոնք հաստատում են, որ առնետներին բալի լիոֆիլ փոշու ներորովայնային ներմուծումը 2.5 գ/կգ դեղաչափով ուղեկցվում է ուղեղի աջ ընդհանուր քնային զարկերակի կապումով խափանված ուղեղի տեղային արյունահոսքի բարելավմամբ, զարկերակային ճնշումը բնութագրող ցուցանիշների նվազեցմամբ՝ իջեցնելով սիստոլիկ զարկերակային ճնշումը 15.3 %-ով,

դիաստոլիկը՝ 14.2 %-ով և դրանցից անցնելով միջին զարկերակային ճնշումը՝ 14.7 %-ով, իսկ 0.9 գ/կգ դեղաչափով՝ հակաբորբոքային ազդեցությամբ, ինչը հաստատվել է բորբոքման գործընթացը բնութագրող ձևաբանական փոփոխությունների կանխմամբ և բորբոքված ականջի զանգվածի նվազեցմամբ 47.11%-ով:

Գիտական դրույթների և եզրակացությունների հիմնավորումը և հավաստիությունը

Ստացված արդյունքների վավերությունը և հավաստիությունը պայմանավորված է հետազոտության համարժեք ժամանակակից մեթոդների և վիճակագրական մշակման համալիր օգտագործմամբ:

Ատենախոսական աշխատանքում դրված նպատակին հասնելու և առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են ներկայումս կիրառվող ժամանակակից հետազոտական մեթոդները, այդ թվում բալենու պտուղներից տարբեր լուծամզվացքների և լիոֆիլ փոշու ստացումը, թրոմբոցիտների ագրեգացիայի, արյան լիպիդային կազմի, հոմոցիստեինի քանակական որոշումը, ուղեղային տեղային արյան շրջանառության հետազոտությունը, ինչպես նաև սուր բորբոքման մոդելի վրա բորբոքման օջախի ձևաբանական գնահատումը:

Հետազոտության տվյալները վիճակագրական մշակման համար կիրառվել են IBM SPSS Statistics 27 և Microsoft Excel 16.88 (Microsoft 365) ծրագրերը: Ստացված տվյալները ներկայացված են խմբային միջին արժեքի $\pm$ ստանդարտ սխալի ($M \pm SEM$) տեսքով: Հետազոտության տվյալների բաշխման նորմալությունը «Կոլմոգորով-Սմիրնով» թեստով ստուգելուց հետո կիրառվել են համապատասխան պարամետրիկ թեստեր: Անկախ ընտրանքների համար կիրառվել է Ստյուդենտի t -չափանիշի երկկողմանի տարբերակը, իսկ կապակցված խմբերի համար՝ կապակցված t -թեստը: Տվյալները համարվել են վիճակագրորեն նշանակալի առաջին տիպի (α) սխալի 0.05-ից փոքր հավանականության դեպքում:

Աշխատանքի հիմնական դրույթները ներկայացվել են գիտաժողովներում, իսկ նախնական փորձաքննությունը կայացել է Մ. Հերացու անվան ԵՊԲՀ-ի

«Տեսական բժշկություն» փորձագիտական հանձնաժողովի նիստի ընթացքում և հաստատվել է գիտակոորդինացիոն խորհրդով:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը ներկայացված է սեղմագրում և գիտական պարբերականներում տպագրված 7 աշխատություններում, այդ թվում՝ 5 հոդվածներում (1-ը առանց համահեղինակների) և 2 թեզիսներում:

Սկզբունքային դիտողություններ չունեմ, սակայն հարկ եմ համարում անդրադառնալ հետևյալ հարցերին.

- Ձեր կարծիքով ի՞նչ դեղաձևով է նպատակահարմար կիրառել բալենու պատրաստուկները գործնական բժշկության մեջ:

- Ձեր կարծիքով անվտանգ է արդյոք բալի և բալենու պատրաստուկների համատեղ կիրառումը հակաագրեզանտների և մի շարք այլ դեղերի հետ, հաշվի առնելով դեղ-բալ ֆարմակոդինամիկական և ֆարմակոկինետիկական փոխազդեցության հնարավոր վտանգը: Ի՞նչ գործնական խորհուրդներ և նախազգուշացումներ կառաջարկեիք դրա վերաբերյալ:

Եզրակացություն

Այսպիսով, բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Քնարիկ Մկրտչի Շամիլյանի ատենախոսությունը արդիականությամբ, ժամանակակից մեթոդաբանական մոտեցումների հիմնավորմամբ, ծավալով, ստացված արդյունքների նորությամբ և դրանց մեկնաբանությամբ հանդիսանում է համալրված գիտագործնական նշանակություն ունեցող հետազոտություն:


Ատենախոսական հետազոտությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի ԺԴ.00.14 «Դեղաբանություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների

թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար պահանջներին, իսկ
ատենախոսը՝ Քնարիկ Մկրտիչի Շամիլյանը արժանի է բժշկական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Մ.Հերացու անվան Երևանի պետական
բժշկական համալսարանի կլինիկական
ֆարմակոլոգիայի ամբիոնի վարիչ,

բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Ն.Ռ. Միրզոյան

Պրոֆեսոր Ն.Ռ. Միրզոյանի ստորագրությունը
հավաստում եմ.

Մ.Հերացու անվան Երևանի պետական
բժշկական համալսարանի գիտական քարտուղար,
բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր



Տ.Գ. Ավագյան

10 նոյեմբերի 2025 թ.